




ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ՝ ՑԱՎ ԵՎ ՍԵՐ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ

1915 թվական: Արդեն 75 տարի:

Նորից կանգնած ենք մեր ժողովրդի պատմության ամենամոռյալ թվականի առաջ: Այս անգամ, սակայն, մեր կեցվածքը ավելի խրոխտ է ու հույսը առավել արծարծ: 1988 թվականից սկսած Արցախյան շարժումը զարթոնք պարգևեց մեր ժողովրդին ամենուրեք: Զարթոնք կամքի և վճռակամության՝ տնօրինելու սեփական ճակատագիրը: Զարթոնք ոգու և ազգային արժանապատվության՝ կերտելու սեփական պատմությունը և, հոգևորքի մեջ անգամ, իր հոգու կրակից մի կայծ բաշխելու աշխարհին՝ այն մի քիչ ավելի լուսավոր ու մարդասեր դարձնելու համար: Եղել է մոռյալ ժամանակ ու Եղեռն է եղել, բայց հառնել է ազգը, պեծը կայծ է դարձել, կայծը՝ կրակ, ու կրակը՝ բորբոք հուր, և այդ բորբոք հուրով պողոթկաց հայ հոգին, Հայաստանի հոգին, հավերժության ոգին:

1965 թ. Մեծ եղեռնի հիսնամյակի իր սրբազան կոնդակում ի՞նչ իմաստուն ընդհանրացում կատարեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը.

«Մեր հինաւորց ազգի պատմութիւնը կենդանի յուշարձան մըն է, մարդկային աշխարհի հորիզոնին վրայ բարձրացող, շաղախուած ու մարմին առած նահատակներու 'արիւնով, քարիին ու գեղեցիկին ծառայելու ստեղծարար հանճարով և սեփական ազգ ու ազատ հայրենիք կերտելու սրբազան կիրքով, այն օրէն մանաւանդ, երբ Աւետարանի լոյսը իջաւ ի Հայաստան աշխարհ: Քրիստոսի Աւետարանով՝ հայ ժողովուրդը հաւատաց կեանքին, հաւատաց լոյսին ու շինարար աշխատանքին...»:

Ու Քրիստոսի Եկեղեցին՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, մշտապես կիսեց իր հավատացյալ հոտի տագնապն ու ուրախությունը, իր լուսամիտ հայրապետների ողջախոս պատգամներով փրկության ուղի մշեց

ազգի ամենածանր օրերին, վամպերի կիսախաւար խուցերում առկայծ սրահեց լուսավորության ու մշակույթի ճրագը և այդ առկայծ լույսը դարձրեց հույս ու հավատք ապագայի նկատմամբ: Թեկուզ միայն այս դերի համար հայ մարդը պաշտամունք պետք է տաճի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նկատմամբ. Եկեղեցին երբեք չլքեց իր հոտին, ու դեռ երկար կողեցի մեր ժողովուրդի պատմությանը: Եկան նոր թշնամիներ, նայեցին Արարատի սեզ ճակատին ու անցան: Նրանցից ոմանք անհետացան պատմության մութ քաւիղներում, իսկ հայ ժողովուրդը իր ոգու առկայծ ճրագը պահեց անմար և վերջին՝ մոտ-վեցհարյուրամյա պետականությունից զուրկ գոյավիճակից հետո հասավ համաշխարհային բուռն ալեկոծումների ժամանակաշրջան: Կործանվում էին դարավոր կայսրություններ, փոփոխվում էին համամարդկային արժեքախիւները, և թվում էր, թե ուր որ է կհնչի ժողովուրդների ազատության շեփուրը: Բայց պայթեց համաշխարհային պատերազմը: Առաջինը, որ իր ընդգրկումով սպառնաց ողջ քաղաքակիրթ աշխարհին. խախտվեց ուժերի հավասարակշռությունը և պայթեցին թնդանոթները: Մթագնեց երկնակամարը և հայոց երկնքի վրա, որովհետև Օսմանյան կայսրությունը իր հոգևարքի ջղաձգումների մեջ հաշվեհարդար էր տեսնում ազգային փոքրամասնությունների հետ: «Հայկական Հարցը» վաղուց դարձել էր միջազգային քաղաքականության լծակներից մեկը: Ուրեմն և հայ ժողովուրդը դառնում էր միջազգային քաղաքականության հիմնատարներից մեկը, և այդքանով անցանկալի Օսմանյան կայսրության քաղաքական հեռագնա ծրագրերի համար: Փոխվեց համիդյան բացարձակատիրությունը, բայց չվերացավ նպատակը. Օսմանյան փլուզվող կայսրությունը դարձավ ավելի թուրքական, առավել ազգայնական և անհամեմատ ավելի նպատակասլաց: 1914 թ. օգոստոսյան պատերազմը ստեղծեց լավագույն պայմաններ լուծելու գոնե Թուրքիայի ներքին խնդիրները, հաշվեհարդար տեսնելու ազգային փոքրամասնությունների հետ:

Իսկ արդարացման առիթը կար. հույները դուռ էին բացում քրիստոնյա աշխարհի միջամտության ազգայնամոլ Թուրքիայի գործերին, հայերը ռուսամետ էին և կարող էին օգնել թշնամի Ռուսաստանին՝ իրականացնելու իր դարավոր երազանքը՝ իջնելու դեպի Միջերկրական: Ռուսական «Տաք ջրերի» քաղաքականությունը կարող էր լուծվել ամեն մի շեշտակի հարձակումով: Ուստի պետք էր «հայերից և հույներից դատարկել» Ռուսաստանի հետ ճակատային գիծը: Իսկ այդպիսի ճակատային գիծ էր ամբողջ Արևմտյան Հայաստանը: Այստեղ այլընտրանք չկար. առկա էր պայմանը՝ **պատերազմական խառնաշփոթ**. ներկա էր հանցակազմը (հաշտ աշխարհի՝ արդարացուցիչ դեպք հանցանագ)՝ **ռուսափրության**, իրագործվում էր ծրագիրը՝ **«չկա հայ, չկա Հայկական հարց»**: 1915 Ապրիլի 24-ը միջնարարն էր միայն հայաջինջ քաղաքականության այն շղթային, որ հյուսվեց Սասունի ու Ադանայի ջարդերով, գոյատևել Բաքվով ու Ծուշիով՝ ընդգրկելու համար ամբողջ Արևմտահայաստանը, հանգելու համար Սուվգայիթին ու 1990 թվականի հունվարի 13-ի Բաքվին: Այստեղ նույնպես Հայ Եկեղեցին անբաժան մնաց ժողովրդի ճակատագրից: Բազմաթիվ հոգևորականներ նահատակվեցին, ու շատեր Սարդարապատի մարտերում կոնցին լքյալ ժողովրդի նոր հաղթանակը: «Վառեցան զինու հոգւոյ արիաբար ընդդէմ մահու»:

Այսօր 1915 թ. Ապրիլի 24-ի՝ Մեծ եղեռնի 75-ամյակի առաջ անիմաստ է այլևս որոնել արդարացում կատարվածի կամ ժխտել այն, ինչ ապացուցված է հարյուրավոր փաստաթղթերով, վավերագրերով, պատկերներով ու գրքերով: Եվ իթթիհատական ազգայնամոլների այսօրվա հետևորդները գոնե Պիղատոսի քաջությունը չունեն իրենց ձեռքերը լվալու հայ ժողովրդի արյունից («եղել է, բայց մենք չենք եղել» չքմեղանքով), սակայն պատմության դատաստանի առաջ ոչինչ անհաղթելի չէ, և արդարությունը միշտ գալիս է, թեկուզ ուշացած:

Մեր հույսը մենք ենք ու մարդասերները: Մարդասիրությունը քաղաքականություն չէ, գիտենք, բայց մարդկությունը առավել մարդասեր է դառնում օր առ օր, և դա լավ հույս է: Վկա 1988 թվականի ահեղ երկրաշարժը: Երկրագունդը ափերի մեջ առավ աղետոյալ Հայաստանը, Հայաստանը դարձավ մարդկության ցավը, ու հալածանք, որ Հայաստանը մի օր կդառնա մարդկության սերը, ու կապաքննվեն մեր վերքերը, ու գալլն անգամ կլիզի թաթերն ու դարավոր արյան գարշահոտ կզգա իր ժանիքների տակից, քանզի մարդկությունը իր այս փոքր ածուխից միայն հոգու շռայլություն է տեսել, համաշխարհային մտքի անդաստանում ափսոս գեղեցիկի պաշտամունք է տեսել, ու պիտի գուրգուրա նրան ու անվտանգ պահի, քանզի մարդկության հոգու ջերմության մի կայծն էլ հայ ժողովրդի ոգու արգասիքն է:

Արդեն 2000 տարի է, Քրիստոսի Ավետարանը հնչում է այս բարձր լեռներում՝ տարերքի ու արհավիրքի պահերին:

Եվ այսօր ժողովուրդը նոր եռանդով ու հույսով հայացքը սևեռել է դեպի Եկեղեցին, և Մայր Եկեղեցին հուսախաբ չի անի իր զավակներին: Ամենայն Հայոց Հայրապետը իր ողջախոն գգոնությամբ հսկում է իր հոտի անդորրը՝ աղոթելով առ Աստված, որ մարի կրակն այս տազնապահարույց, և սեր բաշխի մարդկանց մեր փոքրիկ ածուխի նկատմամբ, որն իր ողջ պատմությամբ մարտակիցն է ճշմարտության և արդարության:

Իսկ Եղեռնի 75-ամյակին Ամենայն Հայոց Հայրապետը վճռական պատգամեց.

«1915-ի ցեղասպանությանը զոհ գնացած հայոց հոգիները այսօր մեզ հետ են և միանում են մեր աղօթքներին, մեր մաքառումներին: Նրանք քաջալերում են ու զօրացնում մեզ և պատգամում բոլորիս՝ անշեջ պահել նրանց ուխտը, ամուր կախպանել մեր ազգային հաւատամքն ու հաւաքական կամեցողությունը, միասնական ուժերով յաղթահարելու համար մերօրեայ դժուարությունները, գործելով ողջմտությամբ ու հեռատեսությամբ, երբեք մոռացութեան չտալով անցեալի մեր կործանարար փորձությունները»:

